

ազատումով կը սկսէր. իրենց նոր կեանքը կաթողին մօր, սիրելի բոլ յաւիտենա-
կան անջատումին սկզբնաւորութիւնն էր:

Գաւազին և անուշ նայուածքով դիւ-
ցազնիկի կուրծքէն չէր որ կ'ելլէին հե-
ծեծանքը, այլ անոր ոգւոյն խորերէն կը
բղիւէր զառնութեան հառաչանքը: Յով-
հաննա եղբոր վերեկ անկողնոյն մէջ ըն-
կողմանած, աւելի լուրջ և տանջուող դիւ-
մագիծ մ'ունէր, անոր ուշիմ աչքերը յան-
կարծական լուսոյ սաստկութենէն կը խլա-
ղէին: Երբեմնի գեղուհի Նաթալիան այն-
քան հիւսած մաշած էր՝ որ ի սկզբան՝
տեսութեան եկող ազգականը՝ մայրը կար-
ծեց տեսնել: Խեղճ թշուառներ 18 օր
կատարեալ հոգեվարք քաշած էին... Ո՛հ
մտածելն իսկ արտասուել կու տայ:

Երբ անոնց՝ ո՞րքան ժամանակ փլա-
տակներու տակ մնացած ըլլալն հարցուե-
ցաւ, պատասխանեցին (ինչպէս 15 օրէն
ազատուող մարդը). «Երկայն շառ, եր-
կայն ժամեր! Երեք կամ չորս օր»:

Օրհնեալ պատրանք՝ զոր կը պատճառէ
շարունակական մթութիւնը, որով ողջ-
թաղուածներու յուսահատութիւնը կը չա-
փաւորուի և որով ապականած ոգի ճրն-
շումին և անսուղութեան սաստկութիւնը
նուազ զգալի կ'ըլլայ: Օրհնեալ պա-
տրանք, վասն զի անով կրելիք եղբրա-
կան մահուան արհաւիրքը դեռ հեռու կը
կարծուի իրենցմէ:

Երեք ողջ — թաղեալները՝ Նիւ — Եօրքի
մէջ հայր և եղբայր ունէին:

Հ. ՆԵՐՍԷՍ Տ.

Բժիշկը մարմնոյ հիւանդութիւնը ԱՅՈՒՆ կը
հասկնայ. փրկսփան՝ հոգւոյնը:

Լաւ ձիուն՝ հարուած մը, իմաստուն մարդոյ՝
խօսք մը:

Գէշ ճամբով ստացուած համբաւը՝ արհամար-
հանաց կը փոխուի:

Վրէժխնդրութիւնը՝ վերք չի բուժեր:

Ալիս մը միայն՝ չատ առաքինութիւններ կը
նսեմացընէ:

ՈՒՂՂԻԼԻԻՔ

Ներկայ տարուան Բազմավէպի 76երորդ էջին մէջ
Ռայսադի Կատարեան Հայոց Ի սկզբնէ մինչև ԲԱՐ-
ՅԱՆԻ Հարստութիւն» յօդուածին անուններու ժամա-
նակագրական ցանկը՝ զբաշարի անուշադրութեամբ խառ-
նակ շարուած ըլլալով՝ հարկ տեսանք ըստ բնագրին
ուղղելով կրկին հրատարակել:

ԻԱՆՏԱՆ ԹԱԳԱՆՈՐԲ	ԱՍՈՐԻԱՏԱՆԻԱՅՑ ԹԱՌ
Արամէ 860-843	Ասորիադի բարաւ 888 - 860
Լուիսիպրին 843-835	Սաղմանասար Գ. 860 - 825
Սարիտուրիս Ա. 835-820	Տաժիկ Ռաման Գ. 825-812
Իսրուէնիս 820-805	Ռամանիւրուր Գ. 812 - 783
Մենուշ 805-780	Սաղմանասար Գ. 783 - 772
Արգիստիս Ա. 780-755	Ասորիան Գ. 772-754
Սարիտուրիս Գ. 755-730	Ստարիւրաբի 754-745
Ռուսա Ա. 730-714	Թագաթի փաւր. Գ. 745-727
Արգիստիս Բ. 714-685	Սաղմանասար Ե. 727-722
Ռուսա Բ. 685-675	Սարգոն Բ. 722-705
Էրիսիս 675-670	Սենեքիւրի 705-681
Ռուսա Գ. 670-646	Ասորհատուն 681-667
Սարիտուրիս Գ. 645-620	Ասորիւրիս 667 - 620
Իրքիս 620-600 ?	Ասոր Էթիւիւնի 625-620
	Սինշախիւրան կամ Սառա, կոս 620-608:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԵՄԱՐԱՆ

- Հ. Յ. Ազգի. — Լատին լեզուն և զրականու-
թիւն Նախկին ցով. 145
Եղիշէ Կապրիսի. — Թղթակցութիւն. 161
Առ Հ. Կարապետ Տ. Սահակեան 161
Հ. Ղևոնդ Ալիշան. — Առժաման մտազգեցու-
թիւնք 161

ԳՐԱԿԱՆ Ք

- Վիրգիլիոսի «Եմէական»-ն. — Նկարագիր
Եմէասի վաճանքի, Թարգմ. Հ. Ա. Ղազկիւսեան . 168
Տաթևի Կապրիսի Ռոստի. — Կոյսն երանեալ.
Թարգմ. Մ. Տ. Անանիեան 166
Հ. Կ. Սահակեան. — Լամարթիւնի «Ջրեշ-
տակի եմ անկումը» քերթուածին արեւելեան ծագումը 114

ԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

- Յ. Ունեմի. — Քաղաքական Տեսութիւն. 174

ՊԱՏՄԱԿԱՆ

- Հ. Ներսէս Տ. — Քաղաքա-Սիւրիւն Երկրա-
շարժը, Միսիսիայի կործանումը 177
Ուղղելիք 192
Իրաւներ 168, 192